Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 14-ի «Պետական գույքի կառավարման ոլորտի բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1063-Լ որոշմամբ հաստատված՝ ռազմավարությունից բխող գործողությունների/միջոցառումների ծրագրի կատարման մասին

Ծրագրի հերթական համարը	Միջոցառումը	Ակնկալվող անմիջական արդյունք	Ժամկետը	Կատարման ընթացքը
1.	Պետական կառավարման համակարգի մարմինների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործառույթների իրականացման համար ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին ոչ պետական սեփականություն համարվող տարածքների վարձակալության գործընթացի կանոնակարգում, ինչպես նաև ոչ պետական տարածքների պետական տարածքներով փոխարինելու ուղղությամբ գործողությունների ծրագրի մշակում և իրականացում	**Ակնկալվող միջանկյալ արդյունքը:** Կոմիտեի կողմից պետական մարմինների և կազմակերպությունների կողմից վարձակալված ոչ պետական տարածքների հաշվառում, այդ տարածքների նկատմամբ պահանջի բացահայտում և պետական տարածքների հաշվին պահանջի բավարարման համար տարբերակների մշակում և առաջարկում: Տվյալ գործընթացի կանոնակարգման շնորհիվ (իրավական ակտի մշակում) ՀՀ պետական բյուջեի և ոչ այլ միջոցների հնարավորինս արդյունավետ և նպատակային օգտագործում, ինչպես նաև այդ բնագավառում կամայական մոտեցումների բացառում: **Ակնկալվող վերջնական արդյունքը.** Ոչ պետական տարածքները պետական սեփականություն համարվող տարածքներով փոխարինելու միջոցով ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների խնայում ու աստիճանաբար այդ նպատակով ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների (ներկա դրությամբ 472 մլն դրամ) օգտագործման բացառում:	2022 թվականի 4-րդ եռամսյակ	**Կատարված է:** ՀՀ կառավարության կողմից 2022 թվականի դեկտեմբերի 27-ին ընդունվել է 2057-Ն որոշումը, որով կանոնակարգվել է պետական մարմինների և կազմակերպությունների առաջնահերթ գործառույթների իրականացման համար պետական գույքի օգտագործման տրամադրման կամ դրա բացակայության դեպքում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ոչ պետական սեփականություն համարվող տարածքները վարձակալությամբ ձեռքբերման գործընթացը: **2022-2023 թվականներ՝** թվով 11 պետական մարմինների կողմից վարձակալած թվով 13 ոչ պետական տարածքներ փոխարինվել են պետական սեփականություն հանդիսացող տարածքներով, որի արդյունքում պետական բյուջեի ծախսերը կրճատվել են **270,178,996.4 ՀՀ դրամով,** **2024-2025 թվականներ՝** թվով 5 պետական մարմնի կողմից վարձակալած թվով 10 տարածքների փոխարինման նպատակով Կոմիտեի կողմից առաջարկվել են դիտարկել թվով 9 տարածքներ, որոնց ընդունման դեպքում պետական բյուջեի ծախսերը կկրճատվեն ևս **3,822,424.0 ՀՀ դրամով:**
2.	Պետական գույքի գնահատման գործիքակազմի բարեփոխման ուղղությամբ իրավական նոր մոտեցումների մշակում և ընդունում՝ նպատակ ունենալով հնարավորինս կրճատել	**Ակնկալվող միջանկյալ արդյունքը:** Պետական գույքի գնահատման դաշտը կանոնակարգող իրավական ակտի բարեփոխման շնորհիվ պետական գույքի մասնավորեցման, օտարման և օգտագործման տրամադրման գործընթացների ընդհանուր	2022 թվականի 4-րդ եռամսյակ	**Կատարված է:** Մշակվել և ՀՀ կառավարության կողմից 2022 թվականի օգոստոսի 4-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մարտի 27-ի N 209 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1196-Ն որոշումը: Որոշմամբ

	գնահատման գործընթացի ընդհանուր տևողությունը, բացառել կրկնակի գնահատումները և հնարավորինս տնտեսել գնահատմանը տրամադրվող միջոցները	տևողության կրճատում, կրկնակի գնահատումների բացառում, կառավարման գործընթացում օպերատիվության մակարդակի բարձրացում, վարչարարության պարզեցում: **Ակնկալվող վերջնական արդյունքը.** Գնահատմանը տրամադրվող միջոցների 30 տոկոսի չափով տնտեսում:		մրցույթով, աճուրդով մասնավորեցման կամ օտարման ժամանակ հիմնական միջոցի կրկնակի գնահատման ժամկետը կրճատվել է՝ պարտադիր գնահատում պահանջվող 1 տարվա ժամկետը փոխարինվել է 2 տարով: Արդյունքում 2022-2025թթ ընթացքում գույքի գնահատման համար հատկացվող միջոցների խնայողությունը կազմել է 5,435,594.0 ՀՀ դրամ:
3.	Պետական գույքի օտարման բնագավառում նոր գործիքակազմի ներդրման ուղղությամբ գործողությունների ծրագրի կազմում և իրականացում, մասնավորապես. պետական գույքի վաճառքի գրավչության բարձրացման և քաղաքաշինական ու այլ սահմանափակումների, ինչպես նաև ենթակառուցվածքների հետ կապված խնդիրների լուծման ուղղությամբ միջոցառումների իրականացում և այդ նպատակով բարձր արժեք ու իրացվելի գույքի նկատմամբ 100 տոկոս պետական մասնակցությամբ կազմակերպության (կազմակերպությունների) ստեղծում և դրա (դրանց) բաժնետոմսերի վաճառքի կազմակերպում:	**Ակնկալվող միջանկյալ արդյունքը:** վաճառքի ենթակա պետական գույքի գրավչության և իրացվելիության մակարդակի էական բարձրացում, խոշոր ներդրումային ծրագրերի իրականացումը խթանելու համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծում և ներդրումային միջավայրի բարելավում **Ակնկալվող վերջնական արդյունքը.** ՀՀ պետական և համայնքային բյուջեների մուտքերի ավելացում մինչև 20 տոկոսի չափով, ինչպես նաև ներդրումների ծավալի էական ավելացում	2023 թվականի 4-րդ եռամսյակ	**Կատարված է:** Պետական գույքի վաճառքի գրավչության բարձրացման և քաղաքաշինական ու այլ սահմանափակումների, ինչպես նաև ենթակառուցվածքների հետ կապված խնդիրների լուծման ուղղությամբ միջոցառումների իրականացման և այդ նպատակով բարձր արժեք ու իրացվելի գույքի նկատմամբ 100 տոկոս պետական մասնակցությամբ կազմակերպություն ստեղծելու համար ՀՀ սեփականությունը հանդիսացող ք.Երևան Նալբանդյան 28 հասցեում գտնվող անշարժ գույքի ներդրմամբ ստեղծվել է «Ռիփաբլիք Պլազա» փակ բաժնետիրական ընկերությունը: Ընկերության գործունեության հիմնական նպատակն է Ընկերությանը պատկանող ք.Երևան, Նալբանդյան 28 հասցեում գտնվող անշարժ գույքի արդյունավետ կառավարումը և այդ գույքի գրավչության բարձրացման նպատակով ներդրումային ծրագրերի օժանդակումը: ՀՀ կառավարության 2024թ. դեկտեմբերի 27-ի թիվ 2059-Ա որոշմամբ նախատեսվել էր «Ռիփաբլիք պլազա» ԲԲԸ-ն մասնավորեցման ծրագրում ընդգրկելու մասին օրենքի նախագիծը մինչև 2025թ. հուլիսի 1-ը ներկայացնել ՀՀ կառավարության քննարկմանը: 2025 թվականի հուլիսի 10-ին ընդունվել է ««Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշումը: Միաժամանակ իրականացվել են գույքի չափագրման, սեյսմիկ ուսումնասիրության, գնահատման, պետական մարմիններից ազատման աշխատանքները, ինչպես նաև հայտարարվել և անցկացվել է խորհրդատվական

				ծառայությունների ձեռքբերման երկփուլ մրցույթ, որի նպատակն է Ընկերությանը պատկանող ք. Երևան, Նալբանդյան 28 հասցեում գտնվող շենքի լավագույն և ամենաօպտիմալ օգտագործման տարբերակների վերաբերյալ մասնագիտական եզրակացության ստացումը: Արդյունքում մրցույթի հաղթող մասնակից է ճանաչվել միջազգային «Cushman & Wakefield» ընկերության լիցենզավորված ներկայացուցիչ «Վերիտաս Բրաուն» ՍՊ ընկերությունը, որի հետ 03.10.2025թ. կնքվել է համապատասխան պայմանագիր:
4.	Մասնավորեցման գործընթացն արդյունավետ իրականացնելու, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների թվաքանակն օպտիմալացնելու և մասնավորեցման գործընթացն ավարտելու, ինչպես նաև արժեթղթերի շուկայի զարգացմանը նպաստելու համար պետական գույքի մասնավորեցման նոր ծրագրի մշակում և ընդունում	**Ակնկալվող միջանկյալ արդյունքը:** Մասնավորեցման ծրագրում ֆոնդային բորսայի միջոցով մասնավորեցման ենթակա նոր ընկերությունների ընդգրկում, մասնավորեցման ոչ ենթակա պետական մասնակցությամբ ընկերությունների թվաքանակի սահմանում, նպաստավոր ներդրումային միջավայրի ստեղծում: **Ակնկալվող վերջնական արդյունքը.** ՀՀ պետական և համայնքային բյուջեների մուտքերի ավելացում միջին հաշվով մինչև 25 տոկոսի չափով:	2024 թվականի 3-րդ եռամսյակ	**Կատարված է:** 24.03.2026թ. դրությամբ մասնավորեցման ծրագրի ցանկում ընդգրկված՝ մասնավորեցման ենթակա պետական մասնակցությամբ ընկերությունների թիվը կազմում է 16, ընդ որում՝ 7 ընկերությունների պետական բաժնեմասը 50 տոկոսից պակաս են: ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի թիվ 1262-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն 2024թ.-ի տարեկան տվյալների հիման վրա իրականացված ֆինանսատնտեսական մոնիտորինգի ընթացքում պետական մարմինների կողմից իրենց ենթակայության առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի վատթարացման վերաբերյալ պարզաբանումների, ձեռնարկվող միջոցների և ընկերությունների հետագա կառավարման մասով Պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից ներկայացված առաջարկները քննարկվել են ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեում և առաջարկվել է Պետական գույքի կառավարման կոմիտեին՝ Վարչապետի աշխատակազմ ներկայացնել առաջարկված 7 ընկերությունները, լուծարման ներկայացնելու, ինչպես նաև «Հայավտոկայարան» ՓԲԸ-ն հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ առաջարկություն: ՀՀ կառավարության 2024թ. դեկտեմբերի 27-ի թիվ 2059-Ա որոշմամբ սահմանված ժամկետի հիմքով նախատեսվել էր «Ռիփաբլիք պլազա» ԲԲԸ-ն

				մասնավորեցման ծրագրում ընդգրկելու մասին Օրենքի նախագիծը մինչև 2025թ. հուլիսի 1-ը ներկայացնել ՀՀ կառավարության քննարկմանը: 2025 թվականի հուլիսի 10-ին ընդունվել է ««Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշումը:
5.	Պետական գույքի կառավարման գործընթացը կանոնակարգող օրենսդրության բարեփոխման ուղղությամբ գործողությունների ծրագրի մշակում և իրականացում, մասնավորապես, պետական գույքի մասնավորեցման և կառավարման գործընթացը կանոնակարգող երեք ներկայումս գործող ՀՀ օրենքների հիման վրա նոր մեկ ընդհանուր «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքի մշակում՝ սահմանելով պետական գույքի արդիական նպատակներ, խնդիրներ և սկզբունքներ, կապված կառավարման առաջնահերթությունների փոփոխության հետ:	**Ակնկալվող միջանկյալ արդյունքը.** պետական գույքի կառավարման ոլորտում կառավարման առաջնահերթ թիրախների սահմանում, մեկ օրենքի միջոցով պետական գույքի կառավարման գործընթացի կանոնակարգում, կանոնակարգման պարզեցում, հստակեցում, վարչական քաշքշուկների վերացում, որոշումների ընդունման ժամկետների կրճատում, կառավարման օպերատիվության բարձրացում **Ակնկալվող վերջնական արդյունքը.** պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացում	2024 թվականի 1-ին եռամսյակ	**Կատարված է:** «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ նոր օրենքի և հարակից օրենքների նախագծերը ՀՀ ՏԿԵՆ 16.12.2024թ. թիվ ԴԽ//40834-2024 գրությամբ ներկայացվել էր ՀՀ վարչապետի աշխատակազմի քննարկմանը, ՀՀ վարչապետի աշխատակազմից վերադարձվել էին՝ լրամշակման: Հաշվի առնելով, որ մի շարք՝ այդ թվում էական փոփոխություններ են իրականացվել գործող օրենքում, մասնավորապես՝ Ազգային ժողովի կողմից 2025 թվականի հոկտեմբերի 22-ին ընդունվել են ««Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», ««Գնահատման գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին, ««Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», ««Հիմնադրամների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» և ««Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքները (այսուհետ՝ Օրենքներ), որի արդյունքում կանոնակարգվել են պետական գույքի վարձակալության և անհատույց օգտագործման տրամադրման գործընթացները, ինչը միտված է նպաստելու պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացմանը: Նշվածի հիմքով, ինչպես նաև ընթացիկ այլ փոփոխություններով պայմանավորված նոր օրենքի ընդունումը կորցրել է արդիականությունը և հանվել է շրջանառությունից:

6.	«Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ նոր օրենքի ընդունումից հետո պետական գույքի կառավարման դաշտը կանոնակարգող իրավական ակտերի նախագծերի մշակման և ընդունման ուղղությամբ միջոցառումների իրականացում:	**Ակնկալվող միջանկյալ արդյունքը.** պետական գույքի կառավարման գործընթացը կանոնակարգող ներկայիս վեց տասնյակից ավելի իրավական ակտերի կիսով չափ կրճատում՝ ապահովելով կառավարման գործընթացի կանոնակարգման գործընթացի կանոնակարգման միասնականությունը, պարզությունը, հստակությունը, ընկալման տեսանկյունից մատչելիության մակարդակի բարձրացումը, ինչպես նաև որոշումների ընդունման ժամկետների կրճատումը, կառավարման օպերատիվության բարձրացումը, նույնանման գործընթացների կանոնակարգման և հաշվետվությունների ներկայացման բնագավառում անհարկի կրկնությունների բացառումը **Ակնկալվող վերջնական արդյունքը.** արդյունքում պետական գույքի կառավարման արդյունավետու- թյան բարձրացում:	2024 թվականի 4-րդ եռամսյակ	**Կատարված է:** Ռազմավարության ընդունումից հետո Կոմիտեն պետական գույքի կառավարման դաշտը կանոնակարգող իրավական ակտերի նախագծերի մշակման և ընդունման ուղղությամբ մի շարք միջոցառումներ է իրականացրել: Ամբողջությամբ բարեփոխվել են գույքի, նվիրատվության, օտարման, անհատույց օգտագործման, ներդրումային պարտավորությունների վերահսկման, մոնիթորինգի ընթացակարգերը: Վերոնշյալ Օրենքների կիրարկումն ապահովելու նպատակով մշակվել և շրջանառության մեջ են դրվել Օրենքներից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ իրավական ակտերի նախագծերը, մասնավորապես անհատույց օգտագործման իրավունքով և վարձակալությամբ տրամադրման կարգավորումների մասով, որի արդյունքում ամբողջությամբ բարեփոխվելու է նաև պետական գույքի վարձակալության տրամադրման գործընթացը: